

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԵՒ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ



Ջերմամատակարարման իրավիճակը և ջեռուցման տարբերակները Հայաստանի բազմաբնակարան շենքերում

Տնային տնտեսությունների վիճակագրական ընտրանքային

հետազոտության վերլուծական գեկույց

Հունիս 2005

Բովանդակություն

Նախաբան.....	4
Ընդհանուր տեղեկություններ հետազոտության մասին.....	5
1. Ձեռուցման գործող տարբերակները.....	6
2. Ձեռուցվող մակերեսը և սոցիալական առանձնահատկությունները.....	8
3. Տաք ջրամատակարարումը	11
4. Ձեռուցվող օրվա և սեզոնի երկարությունը, միջին ջերմաստիճանը	11
5. Հիվանդությունները	12
6. Անցումն անվտանգ և մաքուր ջեռուցման	12
7. Ձեռուցման տարբեր տեսակների համեմատական առավելությունները.....	14
8. Համատիրությունների կայացվածությունը	17
Հավելված 1. Ընտրանքի մեթոդաբանությունը	19
Հավելված 2. Հարցաթերթի մշակման մեթոդաբանությունը	24
Հավելված 3. Տվյալների հավաքագրումը	24
Հավելված 4. Ջերմամատակարարման իրավիճակի գնահատման հարցաթերթ.....	25
Հավելված 5. Հետազոտության հիմնական արդյունքները հանրապետությունում	32
Հավելված 6. Հետազոտության հիմնական արդյունքներն առանձին մարզերում.....	44

Նախաբան

Խորհրդային հասարակարգի փլուզումն ուղեկցվեց կենտրոնացված պլանավորման համակարգի քայքայմամբ: Տասնամյակներ շարունակ պլանավորման մեկ կենտրոնից միջոցները բաշխվում էին հսկայական երկրի ողջ տարածքում՝ ընդգրկելով տնտեսության բոլոր ճյուղերը, հասարակական կյանքի բոլոր ոլորտները:

Նախկին համակարգը փլուզվեց: Որոշումների ընդունման մեծ կենտրոնը վերացավ: Այժմ այդ որոշումները կայացվում են հազարավոր փոքր «կենտրոններում»: Փլուզվեց նաև կենտրոնացված պլանային համակարգի տնտեսական ցանցը: Նախկինում գործող արտադրական ենթակառուցվածքի մեծ մասն այլևս գործուն չէ:

Ձեռուցման և ջերմային էներգիայի արտադրության ոլորտները նույնպես զգալիորեն փոխվեցին: Կենտրոնացված ջեռուցման ենթակառուցվածքի անարդյունավետության և վճարումների կարգապահության ցածր մակարդակի պատճառով, ըստ էության, փլուզվեց ջերմամատակարարման նախկին գործող համակարգը:

Հայաստանում ջերմամատակարարման համակարգերը վերականգնելու, ինչպես նաև մատչելի, արդյունավետ և բնապահպանական առումով անվտանգ ջեռուցում ապահովելու նպատակով Հայաստանի կառավարությունը նախաձեռնել է «Ջերմամատակարարման վերականգնման ռազմավարական ծրագրի» իրականացումը:

Նախատեսվում է, որ Համաշխարհային բանկի օժանդակությամբ Հայաստանում իրականացվող բնակավայրերի ջերմամատակարարման վերականգնմանն ուղղված ծրագրում կկիրառվեն ջեռուցման ծրագրերի տեխնոլոգիական, կազմակերպչական և ինստիտուցիոնալ նոր մեխանիզմներ: Բազմաբնակարան շենքերի ջերմամատակարարման համակարգերը վերականգնելու, մատչելի և արդյունավետ ջեռուցման ծառայություններ ապահովելու նպատակով Համաշխարհային բանկի ծրագրի շրջանակներում նախատեսվում է պարբերաբար գնահատել ջեռուցման տարբերակների կիրառման արդյունավետությունը, մատչելի և անվտանգ ջեռուցման հնարավորությունն ունեցող բնակարանների թվաքանակը, բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների կայացվածությունը ջերմամատակարարման ծառայության միասնական պայմանագրեր կնքելու գործում և այլ ցուցանիշներ, որոնց պարբերական վերլուծությունը թույլ կտա գնահատել ջերմամատակարարման ծառայությունների և Համաշխարհային բանկի ծրագրերի իրականացման առաջընթացը:

Սույն փաստաթուղթը «Կանխավճար՝ քաղաքային ջերմամատակարարման առաջարկված ծրագրի» շրջանակներում ՀՀ ՖԷՆ «Ջերմամատակարարման ծրագրեր» ծրագրի իրականացման գրասենյակ պետական հիմնարկի և «Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն» ՀԿ միջև կնքված թիվ UHP-CSF-2004/1-04 պայմանագրով նախատեսվող աշխատանքների ավարտական հաշվետվությունն է: Հաշվետվությանը լազերային կրիչով կցվում է հետազոտություն տվյալների բազան (SPSS ծրագրային փաթեթով) հետագա վերլուծությունների իրականացման համար:

Պայմանագրի նպատակն էր կատարել հետազոտություն և վերլուծել Հայաստանի քաղաքային բնակավայրերի բազմաբնակարան շենքերի ջեռուցման առկա պայմանները, դրանց բարելավման հնարավորությունները, մատչելի և որակյալ ջերմամատակարարման հնարավորությունները:

Ընդհանուր տեղեկություններ հետազոտության մասին

Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնը քաղաքականությունների վերլուծության, դրանց ազդեցության գնահատման և մոդելավորման ոլորտում մասնագիտացված ոչ առևտրային ինստիտուտ է, որն ակտիվ մասնակցություն է ցուցաբերում Հայաստանի սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների հաղթահարման ուղղությամբ իրականացվող ծրագրերին¹:

Առաջնորդվելով ներկայացված տեխնիկական առաջադրանքով և ծրագրի իրականացման մրցույթի մասնակցության համար ներկայացված «Խորհրդատուի աշխատանքային ծրագրի նախագիծ-առաջարկով»՝ 2005 թվականի փետրվար-ապրիլ ամիսներին կազմակերպությունն իրականացրեց Հայաստանի քաղաքային բնակավայրերի բազմաբնակարան շենքերում բնակվող տնային տնտեսությունների Ջերմամատակարարման իրավիճակի գնահատման ընտրանքային հետազոտություն:

Հետազոտության մեթոդոլոգիան մշակվել է փորձառու մաթեմատիկոս-վիճակագիրներից, ինչպես նաև դաշտային և վերլուծական աշխատանքների մեծ փորձ ունեցող մասնագետներից ձևավորված աշխատանքային խմբի կողմից:

Ընտրանքի ձևավորումը կամ հարցման մեջ ընդգրկվող տնային տնտեսությունների որոշումը կատարվել է հետևյալ կերպ.

1. ուսումնասիրվել է բազմաբնակարան շենքերի տեղագրական բաշխվածությունը, և կարատրվել է 29 քաղաքների (ներառյալ Երևանը) ընտրություն,
2. ընտրված քաղաքների 39 քաղաքային և թաղային (28+11) համայնքները որոշակի տրամաբանությամբ տարանջատվել են մի քանի, միմյանց հարակից սեկտորների, և յուրաքանչյուր սեկտորը՝ առանձին սեգմենտների,
3. այնուհետև յուրաքանչյուր քաղաքից (սեկտորից) պատահականորեն ընտրվել են անհրաժեշտ քանակությամբ սեգմենտներ, որոնցում կատարվել է առկա բազմաբնակարան շենքերի համատարած ցուցակագրում,
4. հիմնական ընտրանքը կատարվել է պատահական ընտրանքի եղանակով՝ ցուցակագրված բազմաբնակարան շենքերի տնային տնտեսություններից:

Խնդիր էր դրված ապահովել ինչպես հանրապետական, այնպես էլ մարզային մակարդակով հարցման ներկայացուցչականություն և համատարածություն: Նախապես տրված ընտրանքի մեծությունից (2000 հարցում) որոշվել է Երևանում ընտրանքի նվազագույն մեծությունը, որպեսզի ապահովվի մյուս մարզերում առավելագույն դիտարկումներ: Ընտրված մեթոդաբանությունն ապահովում է ընտրանքում բնակչության կառուցվածքի աստիճանական համապատասխանություն 2001 թվականի մարդահամարի տվյալներին: Այսինքն՝ փոքր-ինչ խախտելով գծային համամասնությունները, մեթոդը հնարավորություն է տալիս մեծացնել հարաբերականորեն փոքր քանակի տնային տնտեսություններ ունեցող մարզերից տնային տնտեսությունների ընտրման հավանականությունը (տե՛ս հավելված 1):

Հետազոտության ընթացքում ուսումնասիրվել են Հայաստանի 10 մարզերի 28 քաղաքային բնակավայրերի և Երևանի 11 թաղային համայնքների բազմաբնակարան շենքերի 2000 տնային տնտեսություններ: Սրա համար կատարվել են այցելություններ 2678 տնային տնտեսություններ, որի 25 տոկոսում չեն եղել բնակվողներ, կամ ստացվել են մերժումներ, կամ էլ այլ պատճառներով հարցաթերթերը չեն լրացվել:

¹ Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնի մասին տե՛ս www.edrc.am


1. Ջեռուցման գործող տարբերակները

Ջեռուցման տարբերակները փաստում է, որ Հայաստանում 2004-05 ձմռանը նախորդ ձմռան համեմատ բարելավվել է քաղաքային բնակավայրերում բազմաբնակարան շենքերի բնակարանների ջեռուցման պատկերը: Աճել է ջեռուցվող բնակարանների քանակը, բարելավվել ջեռուցման որակը:

Ջեռուցման նպատակով 2004-05 ձմռան ընթացքում հետազոտված տնային տնտեսությունների 33 տոկոսը հիմնականում օգտագործել է էլեկտրաէներգիա, փայտ՝ 31 տոկոսը և բնական գազ՝ 30 տոկոսը: Նախորդ տարվա ձմռան համեմատ զգալիորեն աճել է գազի օգտագործումը՝ շուրջ 2.4 անգամ, որը հիմնականում տեղի է ունեցել փայտի նվազման հաշվին: Արդյունքում, եթե դեռևս 2003-04 ձմռանը ջեռուցման հիմնական աղբյուրը փայտն էր՝ 43 տոկոս, իսկ բնական գազի միջոցով իրականացվում էր տնային տնտեսությունների միայն 13 տոկոսի ջեռուցումը, ապա արդեն 2004-05 ձմռանը բնական գազի և փայտի միջոցով ջեռուցվող տնային տնտեսությունների քանակը գրեթե հավասարվեց: Վառելիքային միջոցով ջեռուցման ամենաբարձր ցուցանիշները արձանագրվել են Լոռի, Սյունիք, Արագածոտն և Տավուշ մարզերում, թեև դրանք նախորդ տարվա համեմատ էապես կրճատվել են (տե՛ս պատկեր 1): Բնական գազով ջեռուցման ամենաբարձր ցուցանիշները արձանագրվել են Գեղարքունիք, Շիրակ և Արմավիրի մարզերում:

Շատ փոքր և նվազող դեր ունի կենտրոնացված ջեռուցման համակարգը: Այն 2004-05 ձմռանը ջեռուցման հիմնական աղբյուր է հանդիսացել տնային տնտեսությունների միայն 2 տոկոսի համար՝ նախորդող ձմռան մոտ 4 տոկոսի դիմաց:


Պատկեր 1. Փայտով ջեռուցվող տնային տնտեսություններն ըստ մարզերի (տոկոս տվյալ մարզի ընդամենի նկատմամբ)



Բավականին մեծ և կայուն դեր ունի դեռևս էլեկտրաէներգիայի միջոցով ջեռուցումը բազմաբնակարան շենքերում: Այնուամենայնիվ նկատվում է դրա հիմնական դերի նվազման միտում: Այն աստիճանաբար դառնում է ջեռուցման լրացուցիչ աղբյուր: Ընդ որում բավական մեծ է այն տնային տնտեսությունների թվաքանակը, որոնք ջեռուցման հիմնական աղբյուրի հետ մեկտեղ մեկ այլ՝ լրացուցիչ ջեռուցում ունեն:


2004-05 ձմռանը ջեռուցվող տնային տնտեսությունների շուրջ 20 տոկոսից ավելին ունեցել են ջեռուցման լրացուցիչ աղբյուր, որը խոսում է ջեռուցման հիմնական աղբյուրի միջոցով ջեռուցման անբավարարության կամ անսպասակա հարմարության մասին: Լրացուցիչ ջեռուցման ամենամեծ աղբյուրը թե՛ անցած, և թե՛ սահորդող ձմռանն էլեկտրաէներգիան էր, որի միջոցով լրացուցիչ ջեռուցում ապահովող տնային տնտեսությունների քանակը 2003-04 ձմռան համեմատ 2004-05-ին աճել է 5.6 տոկոսով և կազմել շուրջ 14 տոկոս:

Պատկեր 2. Բնական գազով ջեռուցվող տնային տնտեսություններն ըստ մարզերի (տոկոս տվյալ մարզի ընդամենի նկատմամբ)



Չգալի փոփոխություն կա նաև բազմաբնակարան շենքերի բնակարաններում ջեռուցման համար օգտագործվող սարքավորումների կազմում: 2003-04 ձմռանը ջեռուցման նպատակով տնային տնտեսությունները հիմնականում օգտագործել են ինքնաշեն վառարաններ, էլեկտրական սալիկներ և էլեկտրական մարտկոցներ (տես կամ յուղային): 2004-05 ձմռանը տնային տնտեսությունների կրկին ամենամեծ մասն է օգտագործել ինքնաշեն վառարաններ, սակայն կտրուկ աճել է գործարանային արտադրության վառարաններ օգտագործողների թվաքանակը:


Պատկեր 3. Գործարանային արտադրության վառարանների օգտագործումն ըստ մարզերի (տոկոս)



2. Ջեռուցվող մակերեսը և սոցիալական առանձնահատկությունները

Համաձայն հետազոտության արդյունքների, տնային տնտեսությունների շուրջ 3 տոկոսն ընդհանրապես չեն ջեռուցվել: Տնտեսությունների հիմնական մասում՝ 52 տոկոս, ջեռուցվել է միայն մեկ սենյակ, 27 տոկոսում՝ 2 սենյակ և միայն 3 տոկոսում՝ 4 և ավելի սենյակ: Սա մի կողմից պայմանավորված է բնակարանների սենյակների քանակով: Այնուամենայնիվ 2 սենյականոց բնակարանների միայն 47 տոկոսն է բնակարանը ջեռուցել ամբողջությամբ, 3 սենյականոցների՝ 36 տոկոսը: 4 և ավելի սենյականոց բնակարաններում բնակվող տնային տնտեսությունների 35 տոկոսը ջեռուցել են միայն 1 սենյակ, իսկ 22 տոկոսը՝ 2 սենյակ: Այսպիսով, հանրապետությունում բավականին ցածր է այն տնային տնտեսությունների թվաքանակը, որոնք ամբողջությամբ ջեռուցում են բնակարանը: Ընդ որում բնակարանն ինչ-որ չափով ջեռուցող տնային տնտեսությունների միայն 7 տոկոսն է ջեռուցում բաղնիքը, և 37 տոկոսը՝ խոհանոցը:


Պատկեր 4. Ջեռուցվող սենյակների փաստացի քանակն ըստ բնակարանների մեծության (2, 3, 4 և ավել սենյականոց բնակարանների թվաքանակը յուրաքանչյուրի համար հավասար է 100 տոկոս)




Բնակարաններն ամբողջությամբ ջեռուցող տնային տնտեսությունների հիմնական մասը՝ 52.2 տոկոս, բնակվում են քարե շենքերում, սակայն ջեռուցվել է ընդհանուր քարե շենքերի 47 տոկոսը: Ամբողջությամբ է ջեռուցվել մոնոլիտ շենքերում բնակվող տնային տնտեսությունների գերազանց մեծամասնությունը՝ 75 տոկոս, սակայն դրանք կազմել են ընդհանուր ամբողջությամբ ջեռուցված տնային տնտեսությունների միայն 7.8 տոկոսը:

Բնակարանի ջեռուցման աստիճանը կապված է նաև տնային տնտեսություններում երեխաների և ծերերի առկայությունից: Բնակարանը մասամբ ջեռուցող և ընդհանրապես չջեռուցող տնային տնտեսությունների համապատասխանաբար 82 և 84 տոկոսում մինչև 5 տարեկան երեխաներ չկան:

Պատկեր 5. Ջեռուցման ամբողջականությունն ըստ բնակարանների արտաքին պատերի (տոկոս)




Պատկեր 6. Ջեռուցման պատկերն ըստ տնային տնտեսություններում երեխաների առկայության (տոկոս տվյալ տիպի տնտեսության ընդամենի նկատմամբ)




Պատկերը մի փոքր այլ է այն տնային տնտեսություններում, որտեղ ծերեր կան: Բնակարանը չջեռուցող տնային տնտեսությունների մեծ մասում՝ 51 տոկոս, ծերեր կան:

Պատկեր 7. Ջեռուցման պատկերն ըստ տնային տնտեսություններում ծերերի առկայության (տոկոս տվյալ տիպի տնային տնտեսության ընդամենի նկատմամբ)



Հիմնականում տնային տնտեսությունները միջին գնահատական են տվել իրենց սոցիալական վիճակին: Փայտի միջոցով ջեռուցվող տնային տնտեսությունների 42 տոկոսը և էլեկտրաէներգիայի օգտագործողների 37 տոկոսն իրենց սոցիալական վիճակը գնահատել են վատ: Բնական գազ օգտագործողների միայն 9 տոկոսը և էլեկտրաէներգիա օգտագործողների 6 տոկոսն են իրենց սոցիալական վիճակը գնահատել լավ:


Պատկեր 8. Ընտանիքի կարիքները հոգալու կարողության սեփական (սուբյեկտիվ) գնահատականը



Բացի հարցվածների սուբյեկտիվ գնահատականի, նրանց վիճակի գնահատական են տվել նաև հարցազրույցավարները:

Հետաքրքրական է, որ հարցազրույցավարների կարծիքով փայտ և բնական գազ օգտագործող տնային տնտեսությունների 5 տոկոսի սոցիալական վիճակը շատ լավ է: Եթե փայտ օգտագործող տնային տնտեսությունների սեփական գնահատականներով 55 տոկոսի վիճակն է միջին համարվել, ապա հարցազրույցավարները միջին են գնահատել փայտ օգտագործողների 44 տոկոսի սոցիալական վիճակը:

Պատկեր 9. Ընտանիքի կենսամակարդակը հարցազրույցավարների կարծիքով



3. Տաք ջրամատակարարումը

Համաձայն հետազոտության արդյունքների, հանրապետության քաղաքային բնակավայրերի բազմաբնակարան շենքերում բնակվող տնային տնտեսությունների 1.5 տոկոսը կենցաղային նպատակով ընդհանրապես չի օգտագործում տաք ջուր: Տաք ջրի ստացման հիմնական եղանակն էլեկտրական բաց ջեռուցիչներն են (êèì Իժèèմí èè, í èèòðà), որից օգտվում են տնային տնտեսությունների 37 տոկոսը: Տաք ջրի ստացման հաջորդ միջոցը վառարաններն են՝ 22 տոկոս: Տնային տնտեսությունների միայն 14 տոկոսն են օգտվում տաք ջրամատակարարման համար նախատեսված էլեկտրական սարքերից, բակերից կամ կաթսաներից և 12 տոկոսը՝ գազի ջրատաքացուցիչներից: Հանրապետության տնային տնտեսությունների շատ փոքր՝ շուրջ 1 տոկոսն է օգտվում լոկալ-անհատական կաթսայի միջոցով տաք ջրամատակարարումից:

4. Ջեռուցվող օրվա և սեզոնի երկարությունը, միջին ջերմաստիճանը


Ջեռուցման սեզոնի ընթացքում բնակարանների ջեռուցումն օրվա ընթացքում տևում է հիմնականում 6-ից 11 ժամ, սակայն քիչ չէ մինչև 3 ժամ ջեռուցվող տնային տնտեսությունների քանակը՝ 8.5 տոկոս, իսկ մինչև 4 ժամ՝ 18 տոկոսը: Օրվա ընթացքում 12 ժամից ավել ջեռուցվող տնային տնտեսությունները կազմում են ընդամենի 23 տոկոսը: Շուրջօրյա ջեռուցում (22-24 ժամ) ունեն տնային տնտեսությունների շուրջ 4 տոկոսը:

Կախված բնակլիմայական առանձնահատկություններից՝ հանրապետությունում տատանվում է ջեռուցման սեզոնի երկարությունը: Տնային տնտեսությունների հիմնական մասի մոտ՝ 38 տոկոս, ջեռուցումը տևում է 3-4 ամիս: 4-5 ամիս և 5-6 ամիս ջեռուցվող տնային տնտեսությունների թվաքանակները նույնպես փոքր չեն և կազմում են ընդամենի 20-ական տոկոսները:

Ջեռուցման սեզոնի ընթացքում տնային տնտեսություններում միջին ջերմաստիճանը որոշակիորեն կախված է այդ տնտեսություններում հիվանդների, ծերերի և երեխաների առկայությունից: Այսպես, այն տնային տնտեսություններում, որտեղ երեխաներ կան, ջեռուցման սեզոնի ընթացքում միջին ջերմաստիճանը 16.6 աստիճան է, իսկ որտեղ չկան՝ 15.4 աստիճան: Նույնը չի կարելի ասել հիվանդներ և ծերեր ունեցող տնային տնտեսությունների մասին:

Ստորև ներկայացված պատկեր 10-ում շեղանկյան մեջ գրված է ջեռուցման սեզոնի ընթացքում տնային տնտեսությունների միջին ջերմաստիճանը հիվանդների, ծերերի կամ երեխաների առկայության դեպքում: Իսկ շրջանակների մեջ ներկայացված է հիվանդների, ծերերի կամ երեխաների բացակայության դեպքում բնակարանների միջին ջերմաստիճանը:


Պատկեր 10. Միջին ջերմաստիճանը տնային տնտեսություններում ըստ հիվանդների, երեխաների և ծերերի առկայության (Ցելսիուս)



5. Հիվանդությունները

Համաձայն հետազոտության չափազանց մեծ է անբավարար ջեռուցման պատճառով բնակչության հիվանդությունների քանակը: Քաղաքային բազմաբնակարան շենքերում բնակվող տնային տնտեսությունների միայն 29 տոկոսի մոտ 2004-05 ձմռան ընթացքում չի գրանցվել անբավարար ջեռուցման հետ կապված հիվանդության որևէ դեպք: Տնային տնտեսությունների 61 տոկոսում գրանցվել են գրիպի, 14 տոկոսում՝ հարբուխի, 10 տոկոսում՝ անգինայի և 7 տոկոսում՝ թոքաբորբի դեպքեր: Բնակչության զգալի մեծամասնությունը՝ 42 տոկոս, անցած ձմռանը հիվանդացել է գրիպով: Այն տնային տնտեսություններում, որտեղ գրանցված են հիվանդության դեպքեր, միջինը 2.6 մարդ հիվանդացել է գրիպով:

Պատկեր 11. Հիվանդության առկայությունը՝ կախված ջեռուցման ամբողջականության և երեխաների առկայության հետ (յուրաքանչյուր տիպի տնային տնտեսությունների ընդամենի նկատմամբ տոկոսներ)



Պատկերը ցույց է տալիս, որ հիվանդության դեպքեր ամենաշատը գրանցվում են բնակարանները մասամբ կամ ընդհանրապես չջեռուցող և մինչև 5 տարեկան երեխաներ ունեցող տնային տնտեսություններում: Այսպես, բնակարանները մասամբ ջեռուցած տնային տնտեսությունների 75 տոկոսում գրանցվել են հիվանդության դեպքեր: Մինչև 5 տարեկան երեխաներ ունեցող տնտեսությունների 74.5 տոկոսում գրանցվել են հիվանդությունների դեպքեր:

6. Անցումն անվտանգ և մաքուր ջեռուցման

Անվտանգության, ապահով և մաքուր արդյունավետ ջեռուցմանն անցման մասին վկայում է ինչպես Էներգակիրների, այնպես էլ սարքավորումների օգտագործման վիճակագրության ուսումնասիրությունը:


Համաձայն հետազոտության, այս առումով զգալի առաջընթաց կա: Հանրապետության տարբեր մարզերում գազաֆիկացման բարձր տեմպերի արդյունքում 2004-05 թվականների ձմռանը ջեռուցման պատկերն էապես տարբերվել է 2003-04 թվականների ջեռուցումից: Նախ, կտրուկ աճել է գազի միջոցով ջեռուցվող տնային տնտեսությունների քանակը, որը հնարավորություն է ստեղծում ինչպես առավել մաքուր և արդյունավետ եղանակով ջեռուցման կազմակերպման համար, այնպես էլ առողջապահական և բնապահպանական առումով արդյունավետ ջեռուցման ապահովման համար:

Հանրապետությունում ջեռուցման նպատակով բնական գազ է օգտագործում տնային տնտեսությունների 30 տոկոսը: Այս տնային տնտեսությունների թվաքանակը նախորդող ձմռան նկատմամբ աճել է 2.3 անգամ: Փայտի օգտագործումը նվազել է մոտ 30 տոկոսով:

Չգալիորեն աճել է նաև գործարանային արտադրության վառարանների օգտագործումը՝ նախորդող ձմռան նկատմամբ աճելով 2.8 անգամ:

Նախորդ տարվա ընթացքում գրանցված գազի թունավորումների և արտակարգ դեպքերի մեծ քանակը հիմնականում պայմանավորված էր ինքնաշեն վառարանների օգտագործման հետ: Պետք է նշել, որ նկատվում է նմանատիպ վառարանների օգտագործման կտրուկ նվազման միտում, թեև դրանք թե՛ գազի, և թե՛ փայտի միջոցով ջեռուցման համար ծառայող դեռևս ամենատարածված սարքերն են: Ինքնաշեն վառարաններ է օգտագործել տնային տնտեսությունների 45 տոկոսը, որը նախորդող ձմռան նկատմամբ կրճատվել է մոտ 20 տոկոսով:


Պատկեր 12. Անվտանգ և մաքուր ջեռուցում բնութագրող միտումներ (տոկոս)



Ուսումնասիրելով վերոնշյալը՝ կարելի է փաստել, որ հանրապետությունում նկատվում է անվտանգ, մաքուր և արդյունավետ ջեռուցմանն անցման հստակ միտում:


Չնայած վերոնշյալին, դեռևս շատ փոքր է բնակչության գոհունակությունը ջեռուցման ներկա վիճակից, թեև կա դրա որոշակի բարելավման միտում: Տնային տնտեսությունների 41 տոկոսը դժգոհ են, իսկ 45 տոկոսը մասամբ են գոհ իրենց ջեռուցման մակարդակով: Ուրախալի է, որ բավականին աճել է լիովին գոհ տնային տնտեսությունների քանակը՝ կազմելով մոտ 15 տոկոս, նախորդ ձմռան 9 տոկոսի դիմաց:

Պատկեր 13. Բնակարանի ջեռուցումից բավարարվածության գնահատականը (տոկոս)



7. Ջեռուցման տարբեր տեսակների համեմատական առավելությունները

Պատկեր 14. Տնային տնտեսությունների կողմից բնակարանների ջեռուցման նպատակով կատարվող ծախսերն ըստ ջեռուցման տեսակի (տոկոս)



Ինչպես երևում է բերված պատկերից, ըստ էության, բնակարանների ջեռուցման վրա ամենափոքր ծախսերը կատարվում են կենտրոնական ջեռուցումն ղեկավարող: Կենտրոնական ջեռուցում ունեցող տնային տնտեսությունների գերակշռող մասի՝ 92.3 տոկոսի համար բնակարանի ջեռուցման ամսական ծախսերը չեն գերազանցել 10000 դրամի սահմանը, մինչդեռ հիմնականում էլեկտրաէներգիայի և բնական գազի միջոցով իրենց բնակարանը ջեռուցած տնային տնտեսությունների կեսից ավելին, ինչպես նաև վառելիքային միջոցով բնակարանները ջեռուցող տնային տնտեսությունների շուրջ 62.6 տոկոսը ջեռուցման նպատակով ամսական ծախսել են 10000 դրամից ավել գումար:


Միաժամանակ հարկ է նշել, որ կենտրոնական ջեռուցում ունեցող տնային տնտեսությունների մոտ բնակարանի ջեռուցման ծախսերի համեմատաբար ցածր մակարդակը թերևս որոշ չափով կարող է պայմանավորված լինել չվճարումների հանգամանքով:

Բնակարանների ջեռուցման որակի վերաբերյալ տնային տնտեսությունների սուբյեկտիվ գնահատականները ցույց են տալիս, որ բնակչությունն առավել բարձր է գնահատում կենտրոնական ջեռուցման և բնական գազի միջոցով ջեռուցման որակը:

Այսպես, ինչպես երևում է պատկեր 16-ում բերված տվյալներից, կենտրոնական ջեռուցում ունեցող տնային տնտեսությունների շուրջ 45.2 տոկոսը, ինչպես նաև բնական գազ² օգտագործողների 30.4 տոկոսը համարում են, որ իրենց կողմից օգտագործվող բնակարանի ջեռուցման եղանակներն անթերի են: Մինչդեռ էլեկտրաէներգիա և վառելիքային օգտագործող տնային տնտեսությունների պարագայում այդ գնահատականները շուրջ 10-20 անգամ ավելի ցածր են և համապատասխանաբար կազմում են 3 տոկոս և 2.2 տոկոս:


² Ջեղուկ գազ օգտագործող տնային տնտեսությունները սույն համեմատության մեջ չեն դիտարկվել, քանի որ ճեղուկ գազ օգտագործող տնային տնտեսությունների կշիռը չափազանց ցածր է (0.2 տոկոս) և այն չի համարվում բնակարանի ջեռուցման քիչ թե շատ նշանակալի աղբյուր:

Պատկեր 15. Ջեռուցման տվյալ տեսակի օգտագործման ոչ մի թերություն չկա՞ծ տնային տնտեսությունների տեսակարար կշիռն ըստ ջեռուցման տեսակի (տոկոս)



Գրեթե նույն պատկերն են ցույց տալիս ջեռուցման մակարդակից տնային տնտեսությունների գոհունակության գնահատականները:

Պատկեր 16. Ջեռուցման մակարդակից տնային տնտեսությունների գոհունակության աստիճանն ըստ օգտագործված էներգիայի տեսակի (տոկոս)




Այսպես, ջեռուցման մակարդակից լիովին բավարարված են եղել բնական գազ օգտագործած տնային տնտեսությունների շուրջ 34 տոկոսը և կենտրոնական ջեռուցում ունեցողների 15.4 տոկոսը:

Բնակարանների ջեռուցման մյուս երկու հիմնական տեսակների՝ էլեկտրաէներգիայի և վառելիքայտի պարագայում տնային տնտեսությունների գոհունակության աստիճանը, ինչպես և նախորդ դեպքում, էականորեն ավելի ցածր է եղել: Ջեռուցման մակարդակից

լիովին բավարարված է եղել վառելափայտ օգտագործած տնային տնտեսությունների 6.8 տոկոսը և էլեկտրաէներգիա օգտագործած տնային տնտեսությունների 4.4 տոկոսը:

Ստորև բերվող պատկեր 17-ը ներկայացնում է ջեռուցման տարբեր տեսակներ ունեցող տնային տնտեսությունների բավարարվածության կամ գոհունակության գնահատականներն ըստ ջեռուցման համար օգտագործվող սարքերի: Պատկերը ցույց է տալիս, էլեկտրական սալիկները որպես ջեռուցման հիմնական տեսակ օգտագործող տնային տնտեսությունների ավելի քան 60 տոկոսը դժգոհ է իրենց բնակարանի ջեռուցումից: Մեծ է նաև դժգոհությունն ինքնաշեն վառարաններ և էլեկտրական մարտկոց օգտագործող տնային տնտեսությունների մեջ, համապատասխանաբար՝ 49 տոկոս և 42 տոկոս:


Պատկեր 17. Բնակարանի ջեռուցումից բավարարվածության գնահատականն ըստ ջեռուցման տեսակի (տոկոս)



Ջետազոտության միջոցով վեր հանված բնակարանների ջեռուցման որակի վերաբերյալ օբյեկտիվ գնահատականները ցույց են տալիս, որ թերևս առավել բարձր ջեռուցման մակարդակ է ապահովում բնական գազի միջոցով բնակարանի ջեռուցումը:

Այսպես, ինչպես երևում է պատկեր 18-ից, բնական գազի միջոցով բնակարանի ջեռուցման պարագայում բնակարանի միջին ջերմաստիճանն ամենաբարձրն է եղել և կազմել է 17 աստիճան, որից հետո բնակարանում առավել բարձր ջերմաստիճան են ապահովել վառելափայտը (16.2 աստիճան) և կենտրոնական ջեռուցումը (15.6 աստիճան): Բնակարանների ջեռուցման 4 հիմնական եղանակներից, ըստ էության, ամենացածր ջեռուցման մակարդակն ապահովում է էլեկտրաէներգիան: Վերջինիս միջոցով ջեռուցված բնակարաններում միջին ջերմաստիճանը կազմել է ընդամենը 14.8 տոկոս:

Պատկեր 18. Բնակարանի միջին ջերմաստիճանն ըստ օգտագործված էներգիայի տեսակի (տոկոս)



Ամփոփելով ջեռուցման առանձին տեսակների համեմատական առավելությունների վերլուծությունը՝ կարելի է եզրակացնել, որ բնակարանների ջեռուցման 4 հիմնական եղանակներից առավել նախապատվելի են կենտրոնական ջեռուցումը և բնական գազի միջոցով ջեռուցումը, որոնք թե՛ մատչելիության առումով և թե՛ հատկապես ջեռուցման որակի առումով մյուս երկու եղանակների համեմատ ունեն էական առավելություններ:

8. Համատիրությունների կայացվածությունը

Տեսային տնտեսությունների միայն 29 տոկոսի կարծիքով, իրենց շենքն ունի համատիրություն: 45 տոկոսը գտնում է, որ համատիրություններ չկան: Հարցվածների մնացած մասն ընդհանարապես տեղեկացված չէ այս կառույցի գործունեության և ֆունկցիաների մասին:

Տեսային տնտեսությունների (որոնք նշել են, որ կան համատիրություններ) միայն 19 տոկոսն է համարել համատիրությունները կայացած:

Արդյո՞ք շենքում գոյություն ունի համատիրություն:

	տոկոս
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ	
Այո	29.2
Ոչ	44.7
Զգիտեմ կամ դժվարանում եմ պատասխանել	26.1
Ընդամենը	100.0
ԵՐԵՎԱՆՈՒՄ	
Այո	47.1
Ոչ	17.4
Զգիտեմ կամ դժվարանում եմ պատասխանել	35.5
Ընդամենը	100.0
ՄԱՐԶԵՐՈՒՄ	
Այո	21.2
Ոչ	57.0
Զգիտեմ կամ դժվարանում եմ պատասխանել	21.8
Ընդամենը	100.0

Ի՞նչ ծառայություններ է մատուցում Ձեր համատիրությունը:

	<i>տոկոս</i>
Վերելակի վերանորոգում	5.8
Ջրամատակարարում	12.1
Աղբահանության կազմակերպում	36.5
Ջեռուցման համակարգի վերանորոգում	0.7
Ընդհանուր տարածքների մաքրում	17.5
Ընդհանուր տարածքների վերանորոգում (տանիք, մուտք, նկուղ և այլն)	10.9
Ոչ մի	13.3
Չգիտեմ	1.3
Այլ	1.9
Ընդամենը	100.0

Հատկանշական է, որ համատիրությունների գործառույթների մեջ աննշան տոկոս է զբաղեցնում ջեռուցման համակարգերի վերանորոգումը, այսինչ դա նրանց առաքելություններից մեկն է:

Այսպիսով, ըստ հարցման արդյունքների համատիրությունները Հայաստանում գրեթե կայացած չեն և ներկայում մեծ դեր չունեն ջեռուցման կազմակերպման և վերականգնման գործում: Այս կարծիքը հատկապես բնորոշ է հանրապետության մարզերին:

Հավելված 1. Ընտրանքի մեթոդաբանությունը

1.1. Գլխավոր համակցության ձևավորումը

Ընտրանքի իրականացման մեթոդի որոշման համար, հաշվի առնելով հետազոտության յուրահատկությունն ու առանձնահատկությունները, նախապես ուսումնասիրվել և գատորոշվել են հնարավոր այն տեղեկատվական աղբյուրները, որոնք գլխավոր համակցության ձևավորման առումով կհամարվեն կիրառելի: Այսպես, մինչ սույն հետազոտության ընտրանքի վերջնական մոդելի որոշումը, փորձ արվեց որպես գլխավոր համակցություն դիտարկել համապատասխան վարչական ռեգիստրների տեղեկատվական բազաները, ինչը սակայն դրանցում պարունակվող որոշ տեղեկությունների ոչ ամբողջականության և/կամ ոչ արդիականության հանգամանքներով պայմանավորված համարվեց ոչ կիրառական:

Հաշվի առնելով վարչական ռեգիստրների տեղեկատվական բազաների կիրառման պարագայում հետազոտության արդյունքների տարածման համար որոշակի խնդիրների (արժանահավատության և ներկայացուցչականության տեսանկյունով) ի հայտ գալու հնարավորությունը, ինչպես նաև այն, որ ընտրանքի համար հնարավորինս համընդգրկուն տեղեկատվության տնօրինում է ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը (ՀՀ ԱՎԾ կողմից սկզբնական, անհատական տվյալների գաղտնիության պահպանման և չտրամադրման պարտավորությունն ամրագրված է օրենքով), կիրառվել են գլխավոր համակցության ձևավորման հետևյալ մոտեցումները:

Նախ, ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունից, համապատասխան գրության հիման վրա, ստացվել է ընտրանքի պլանի մշակման և ընտրանքային համամասնությունների որոշման համար անհրաժեշտ, ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքներով ձևավորված՝ հանրապետության քաղաքային (այդ թվում՝ Երևանի թաղային) համայնքների տնային տնտեսությունների քանակի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն՝ ըստ կացարանի տեսակի և ջեռուցման եղանակի (յուրաքանչյուր համայնքն՝ առանձին) (տես՝ աղյուսակը):

Այս փուլում, ստացված տեղեկատվությունը հնարավորություն է ընձեռել ընդհանուր պատկերացում կազմել ընտրանքի ծավալի և մարզային բաշխվածության վերաբերյալ, ինչպես նաև որոշել ընտրանքի իրականացման մեխանիզմները:

Հաջորդ փուլում, բուն ընտրանքի իրականացման և բազմաբնակարան շենքերի տեղագրական բաշխվածության որոշման նպատակով համապատասխան գրություն է հղվել նաև ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի «Գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ հանրապետության քաղաքային համայնքների՝ հետազոտության համար կիրառելի մանրամասնեցվածությամբ քարտեզների ձեռքբերման նպատակով: Ստացված քարտեզները, ընտրանքից բացի, ըստ էության, հնարավորություն տվեցին նաև իրականացնել նախնական ցուցակագրման աշխատանքները՝ գլխավոր համակցության ձևավորումը (տես նաև «2-րդ աստիճան. Սեզմենտների ընտրանքը» հատվածը):

Այս ամենը հնարավորություն ընձեռեց արստրահվել վարչական ռեգիստրներում պարունակվող տվյալներին բնորոշ սահմանափակումներից և հետազոտության իրականացման համար անհրաժեշտ ընտրանքն իրականացնել գիտական գործիքակազմի ու կառուցակարգերի հիման վրա:

1.2. Ընտրանքի կազմակերպումը և արդյունքների տարածումը

Ընտրանքային հետազոտության գլխավոր համակցության միավորներ են հանդիսացել հանրապետության քաղաքային բնակավայրերի բազմաբնակարան շենքերում բնակվող տնային տնտեսությունները: Ենթադրենք, այդ տնային տնտեսությունների քանակը կազմում է N, իսկ ընտրանքային համակցության ծավալը՝ n:

Ստորև նկարագրված է գլխավոր համակցության ստրատիֆիկացման եղանակով իրականացված եռաստիճան ընտրանքի մեթոդաբանությունը, որն ընդհանուր առմամբ հանդիսանում է ինքնակշռված՝ ընտրանքի առաջին և երրորդ աստիճաններում և ենթադրում է հայտանիշի ցուցանիշների վերակշռում՝ երկրորդ աստիճանում:

Եթե N_k -ն դա գլխավոր համակցության k -րդ մարզում բնակվող տնային տնտեսությունների քանակն է (ընդ որում N_1 -ը՝ Երևան քաղաքում բնակվող տնային տնտեսությունների քանակն է), ապա ընտրանքի ընդհանուր ծավալն ըստ մարզերի բնութագրվում է հետևյալ բանաձևով.

$$n_k = \frac{n \cdot \sqrt{N_k}}{\sum_{m=1}^{11} \sqrt{N_m}}, \text{ որտեղ } \sum_{k=1}^{11} N_k = N$$

Նկարագրված եղանակով իրականացված բաշխումն ըստ էության չի խախտել ընտրանքի ինքնակշռվածությունը, քանի որ ի տարբերություն PPS (proportional to population size) դասական եղանակի, բնութագրիչների դիսպերսիայի աննշան ավելացման դեպքում հնարավորություն է տալիս նաև մեծացնել հարաբերականորեն փոքր քանակի տնային տնտեսություններ ունեցող մարզերից՝ տնային տնտեսությունների ընտրման հավանականությունը:

• 1-ին աստիճան. Կլաստերների ընտրանք

Երևան քաղաքի պարագայում համապատասխան կլաստերը դասակարգվել է 12 թաղային համայնքների՝ ըստ դրանցում բնակվող տնային տնտեսությունների քանակի նվազող հաջորդականության: Ընտրանքն իրականացվել է h քայլով (ստացված շարքում՝ h -ը հավասար է N_1/n_1 հարաբերությանն առավել մոտ ամբողջ մեծությանը): Ընտրանքի առաջին միավորն (կլաստերը) ընտրվել է 0-ից 1 միջակայքում գտնվող պատահական մեծությունը ընտրանքի քայլին բազմապատկելու միջոցով, որից հետո հաջորդող միավորներն արդեն ընտրվել են h քայլով: Նշված եղանակի կիրառման արդյունքում, ընտրվել են Երևան քաղաքի 11 թաղային համայնքները (կլաստերներ), ինչպես նաև որոշվել յուրաքանչյուր համայնքում հարցման ենթակա տնային տնտեսությունների քանակները:

Մյուս մարզերում, կլաստերները որոշվել են ըստ տվյալ մարզի համար հաշվարկված, «ինքնաներկայացուցչականության շեմի», ինչը որոշվել է հետևյալ կերպ:

Այսպես, եթե N_{ij} -ն՝ դա i -րդ մարզում ($i = \overline{2,11}$) և j -րդ քաղաքում ($j = \overline{1, s_i}$) (որտեղ՝ s_i -ն i -րդ մարզի

քաղաքների թիվն է և համապատասխանաբար՝ $N_i = \sum_{j=1}^{s_i} N_{ij}$) բնակվող տնային

տնտեսությունների քանակն է, ապա i -րդ մարզի՝ ինքնաներկայացուցչականության p_i շեմը, կորոշվի

որպես $p_i = \frac{N_i}{s_i}$:

Այնուհետ, եթե N_{ij} մարզի j -րդ քաղաքի տնային տնտեսությունների քանակը մեծ է կամ հավասար տվյալ շեմին, ապա քաղաքն ընտրվել է որպես կլաստեր և ներառվել ընտրանքում: Մարզի մյուս քաղաքները, որոնց տնային տնտեսությունների քանակը փոքր է եղել նշված շեմից, միավորվել են մեկ ընդհանուր խմբում: Եթե տվյալ խմբի տնային տնտեսությունների ընդամենը քանակը գերազանցել է շեմը, ապա համամասնական պատահական ընտրանքի եղանակով ընտրվել են այնքան քաղաքներ, որքան անգամ տվյալ խմբի ընդամենը գերազանցել է ինքնաներկայացուցչականության շեմը:

Նկարագրված եղանակով հանրապետության կտրվածքով ընտրվել են թվով 39 կլաստերներ, որոնց բաշխվածությունն ըստ մարզերի և 2000 տնային տնտեսությունների ընտրանքի, արտացոլված է ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ 1. Ընտրանքի ծավալի բաշխումն ըստ կլաստերների (քաղաքների)

Կլաստեր	Մարզը / Համայնքը	Տ/տ քանակը, ընդամենը	որից, առանձին բնակարաններում բնակվող տ/տ քանակը	Ընտրանք	Տոկոս մարզի մեջ	Տոկոս ընդամենի մեջ
	<i>ք. Երևան</i>	<i>277237</i>	<i>195542</i>	595	100	30
1	թ. Աջափնյակ	27254	21319	65	11	3
2	թ. Ավան	12391	9521	29	5	1
3	թ. Արաբկիր	36672	29252	89	15	4
4	թ. Դավթաշեն	10154	8153	24	4	1
5	թ. Էրեբունի	27400	11764	36	6	2
6	թ. Կենտրոն	34459	23048	69	12	3
7	թ. Մալաթիա-Սեբաստիա	33354	23797	73	12	4
8	թ. Նոր Նորք	35922	32376	99	17	5
9	թ. Նուբարաշեն	2109	1284	4	1	0
10	թ. Շենգավիթ	34474	21183	65	11	3
11	թ. Զանաքեռ-Զեյթուն	20227	13631	42	7	2
	<i>Արագածոտն</i>	<i>8057</i>	<i>2470</i>	67	100	3
12	ք. Աշտարակ	4884	1526	52	78	3
13	ք. Ապարան	1607	442	15	22	1
	<i>Արարատ</i>	<i>17821</i>	<i>10134</i>	136	100	7
14	ք. Արտաշատ	6333	3775	55	40	3
15	ք. Արարատ	4260	2997	43	32	2
16	ք. Մասիս	4551	2615	38	28	2
	<i>Արմավիր</i>	<i>22885</i>	<i>11328</i>	143	100	7
17	ք. Արմավիր	7793	3174	47	33	2
18	ք. Վաղարշապատ	12582	6519	96	67	5
	<i>Գեղարքունիք</i>	<i>18788</i>	<i>7083</i>	113	100	6
19	ք. Գավառ	6042	1612	32	28	2
20	ք. Մարտունի	2618	692	14	12	1
21	ք. Սևան	5576	3382	67	59	3
	<i>Լոռի</i>	<i>47010</i>	<i>23051</i>	206	100	10
22	ք. Վանաձոր	28838	16569	161	78	8
23	ք. Ալավերդի	4790	3560	34	17	2
24	ք. Ստեփանավան	4812	1110	11	5	1
	<i>Կոտայք</i>	<i>37887</i>	<i>27927</i>	225	100	11
25	ք. Հրազդան	12674	8650	78	35	4
26	ք. Աբովյան	11392	8885	80	36	4
27	ք. Բյուրեղավան	2067	1719	15	7	1
28	ք. Չարենցավան	6342	5734	52	23	3
	<i>Շիրակ</i>	<i>45006</i>	<i>14175</i>	160	100	8
29	ք. Գյումրի	39337	11739	139	87	7
30	ք. Արթիկ	4248	1761	21	13	1
	<i>Սյունիք</i>	<i>27621</i>	<i>17631</i>	179	100	9
31	ք. Կապան	12834	9346	118	66	6
32	ք. Մեղրի	1312	637	8	4	0
33	ք. Սիսիան	4217	2276	29	16	1
34	ք. Քաջարան	2272	1869	24	13	1
	<i>Վայոց Ձոր</i>	<i>5248</i>	<i>3307</i>	78	100	4
35	ք. Ջերմուկ	1605	1438	46	59	2
36	ք. Վայք	1512	1014	32	41	2
	<i>Տավուշ</i>	<i>13112</i>	<i>5261</i>	98	100	5
37	ք. Իջևան	5094	2471	53	54	3
38	ք. Դիլիջան	4332	1694	36	37	2
39	ք. Նոյեմբերյան	1418	446	9	9	0
	Ընդամենը	520672	317909	2000	-	100

- 2-րդ աստիճան. Սեզմենտների ընտրանքը

Օգտագործելով քաղաքների քարտեզները՝ աղյուսակում նշված 39 կլաստերներից յուրաքանչյուրը տարանջատվել է մի քանի, միմյանց հարակից սեկտորների, որոնց քանակը, կախված քաղաքի տարածքից և բազմաբնակարան շենքերի սփռվածությունից տատանվել է 1-ից 6-ի սահմաններում: Իրենց հերթին, սեկտորները տարանջատվել են 1-ից 10 սեզմենտների՝ ըստ բազմաբնակարան շենքերի զբաղեցրած տարածքների:

Յուրաքանչյուր սեկտորից, հավասար հավանականությամբ ընտրվել է մեկ սեզմենտ, որի համար պիլոտային հետազոտության եղանակով իրականացվել է այդ սեզմենտի բազմաբնակարան շենքերի և դրանցում բնակվող տնային տնտեսությունների նախնական ցուցակագրում: Այսպես, տվյալ աշխատանքի իրականացման նպատակով, հարցազրույցավարներն այցելել են քարտեզի միջոցով նախօրոք ընտրված սեզմենտներ և լրացրել համապատասխան աղյուսակ, որը պետք է տեղեկություններ պարունակեր տվյալ շենքի հարկայնության և բնակարանների քանակի վերաբերյալ:

Քանի որ ընտրանքի վերը նկարագրված քայլում խախտվել է համամասնական ընտրանքի սկզբունքը, ապա ստացված տվյալները վերակշռվել են՝ համաձայն ստորև նկարագրված ալգորիթմի:

Ենթադրենք, i -րդ կլաստերի բազմաբնակարան շենքերում բնակվել են M քանակի տնային տնտեսություններ, որոնցից հարկ է ընտրել m -ը: Պարզ պատահական ընտրանքի պարագայում, յուրաքանչյուր տնային տնտեսության ընտրման հավանականությունը նույն է և հավասար է m/M : Եթե կլաստերը տարանջատված է k սեկտորների և դրանցից յուրաքանչյուրը r_j ($j = \overline{1, k}$) սեզմենտների, ապա տնային տնտեսությունների ընտրման հավանականությունը կբնութագրվի հետևյալ բանաձևով.

$$p = \frac{m}{kS} \sum_{j=1}^k \frac{1}{r_j}, \text{ որտեղ}$$

S -ը՝ դա ցուցակագրման արդյունքներով ստացված տնային տնտեսությունների քանակն է:

$w = \frac{m}{M} : p$ մեծությունն իրենից ներկայացնում է տվյալ կլաստերի տնային տնտեսությունների կշիռը

և օգտագործվում է ցուցանիշների հաշվարկման (արդյունքների տարածման) համար: Հարկ է նշել, որ հետազոտության արդյունքներով առավել բարձր՝ 1,14 կշիռ է ունեցել Երևան քաղաքի Շենգավիթի թաղային համայնքը, մինչդեռ մյուս կլաստերներն ունեցել են առավել փոքր կշիռներ, կամ եղել են ինքնակշռված:

- 3-րդ աստիճան. Տնային տնտեսությունների ընտրանքը

Հարցման ենթակա տնային տնտեսությունների ընտրանքն իրականացվել է յուրաքանչյուր կլաստերի համար իրականացված սեզմենտների ցուցակագրման արդյունքում կազմված ցուցակի հիման վրա՝ սիստեմատիկ ընտրանքի եղանակով:

Անկախ վերոշարադրյալից, հարկ է փաստել նաև այն, որ սույն հետազոտության համար, ընտրանքի պլանի մշակման ընթացքում ընտրանքի ստանդարտ սխալներ են ընդունվել հետևյալ կողմնորոշիչ արժեմեծությունները. այլ կերպ ասած՝ ցանկացած հարցադրման պատասխանի արդյունքում, ստանդարտ սխալը չպետք է գերազանցի աղյուսակ 2-ում տրված մեծություն(ներ)ը.

Աղյուսակ 2. Ընտրանքի ստանդարտ սխալի բաշխումն ըստ մարզերի

Մարզը	Ստանդարտ սխալը
ք. Երևան	0.02
Արագածոտն	0.06
Արարատ	0.04
Արմավիր	0.04
Գեղարքունիք	0.05
Լոռի	0.03
Կոտայք	0.03
Շիրակ	0.04
Սյունիք	0.04
Վայոց ձոր	0.06
Տավուշ	0.05
Ընդամենը, հանրապետություն	0.01

Որպես ասվածի հիմնավորում, ստորև բերվում է հետազոտության արդյունքներով հարցաթերթի 1 և 3 հարցերին տրված պատասխանների արդյունքում ձևավորված ստանդարտ սխալի արժեմեծություններն և վստահության միջակայքը 95 տոկոս հավանականության պարագայում:

Հարց 1. Ընտրահայի ի՞նչ տեսակ էք օգտագործում այս ձմռանը Ձեր բնակարանը ջեռուցելու (տաքացնելու) համար

Անվանումը	Տոկոս	Ստանդարտ սխալ (Std. Error)	Վստահության միջակայք (Confidence Interval (95%))	
Ոչ մի	2.8	0.004	2.08	3.50
Կենտրոնական ջեռուցում	1.9	0.003	1.30	2.48
Էլեկտրաէներգիա	33.3	0.010	31.25	35.32
Բնական գազ	30.0	0.010	27.65	31.59
Հեղուկ գազ	0.2	0.001	0.156	0.731
Նավթ և դիզ. վառելիք	0.2	0.001	0.03	0.46
Փայտ	30.5	0.010	28.45	32.43
Այլ	1.1	0.002	0.80	1.78

Հարց 3. Ի՞նչ սարք էք հիմնականում օգտագործել այս ձմռանը բնակարանը ջեռուցելու համար

Անվանումը	Տոկոս	Ստանդարտ սխալ (Std. Error)	Վստահության միջակայք (Confidence Interval (95%))	
Ընդամենը	2.84	0.004	2.125	3.562
Էլեկտրական սալիկ	21.7	0.009	19.383	22.914
Էլեկտրական ջեռուցիչ (տեն, յուղային մարտկոց)	12.8	0.007	0.727	13.833
Գազօջախ	4.3	0.004	3.173	4.872
Ինքնաշեն վառարան	36.0	0.011	32.999	37.125
Գործարանային արտադրության պարսկական վառարան	21.9	0.009	19.724	23.277
Գործարանային արտադրության եվրոպական վառարան	0.6	0.002	0.227	0.863
Գործարանային արտադրության «այլ» վառարան	0.5	0.002	0.193	0.801

Հարկ է նշել, որ նկարագրված մեթոդաբանությամբ իրականացված ընտրանքի ներկայացուցչականության ապացույց կարող է հանդիսանալ, թերևս նաև հետազոտության արդյունքներով ստացված՝ ընտանիքի միջին չափի, կազմի և այլ ցուցանիշների համընկնումը ՀՀ ԱԿԾ կողմից իրապարակվող պաշտոնական վիճակագրական ցուցանիշների հետ:

Հավելված 2. Հարցաթերթի մշակման մեթոդաբանությունը

Հետազոտության հարցաթերթի կազմման ընթացքում խնդիր էր դրվել մի կողմից՝ ապահովել ծրագրի իրականացման տեխնիկական առաջադրանքով պատվիրատուի սահմանած խնդիրների շրջանակում համապատասխան տեղեկատվության հավաքագրումը, մյուս կողմից՝ հնարավորինս սահմանափակել հարցերի այն քանակությունը, որոնք այլ պարագայում (հարցերի բազմաքանակությամբ պայմանավորված) կարող են եսկան ազդեցություն թողնել տեղեկատվության որակի և արժանահավատության վրա:

Ըստ այդմ, հարցաթերթի կազմման ընթացքում առանձնացվել են բոլոր այն հնարավոր պատասխանների նշումները, որոնք կարող են տրվել հարցվողների կողմից: Նշվածը հնարավորություն է տվել ապահովել ինչպես տրված պատասխանի հստակ ու միանշանակ սահմանումը, այնպես էլ զգալիորեն նվազեցնել հարցաթերթի լրացման ընթացքում պատասխանների գրառման ժամանակահատվածը:

Բացի այդ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հարցվողների կողմից եկամուտների վերաբերյալ տրված պատասխաններն ըստ էության ունեն նվազեցման «միտում», ինչպես նաև այն, որ միջազգային վիճակագրական պրակտիկայում նման հարցադրումները սովորաբար որակվում են որպես «սենսիթիվ», հարցաթերթի կազմման ժամանակ փորձ է արվել նաև խուսափել նմանաբնույթ «ուղղակի» հարցադրումներից:

Մյուս կողմից, հետազոտության գործիքի առանձնահատկություններով պայմանավորված, առանձին հարցաթերթ է նախատեսվել նաև հարցազրույցավարի համար, որը լրացվել է կոնկրետ հարցազրույցի ավարտից հետո և հնարավորություն ընձեռել որոշակի պատկերացում կազմել նաև հարցվողի կողմից տրված պատասխանների «որակի» առնչությամբ:

Ավելին, թե՛ հետազոտության հարցաթերթի, և թե՛ հարցազրույցավարի հարցաթերթի որոշ պատասխաններ հնարավորություն են ընձեռել նաև համադրել ստացված պատասխանները և առավել ճշգրիտ բնորոշել ստացված պատասխանների արժանահավատությունը:

Հավելված 3. Տվյալների հավաքագրումը

Տնային տնտեսություններից սոցիոլոգիական հարցմամբ անհրաժեշտ տեղեկությունների հավաքագրման աշխատանքների գործընթացն իրականացվել է հարցազրույցավարների կողմից՝ հարցումների միջոցով: Մինչ այդ, հարցման արդյունավետության ապահովման նպատակով, իրականացվել են հարցազրույցավարների հրահանգավորման աշխատանքներ, որոնց ընթացքում պարզաբանումներ են տրվել հարցաթերթի կառուցվածքի, առանձին ցուցանիշների, ինչպես նաև լրացման առանձնահատկությունների վերաբերյալ:

Ստացվող տեղեկատվության հնարավոր բարձր որակ ապահովելու և հարցաթերթում գետեղված հարցերին պատասխանելուց հրաժարվելու, մասնակիորեն պատասխանելու և այլ դեպքերը նվազագույնի հասցնելու նպատակով, տնային տնտեսություններին տրվել են նաև Կենտրոնի նախագահի կողմից ստորագրված համապատասխան գրություններ՝ հարցման անհրաժեշտության և նպատակների վերաբերյալ պարզաբանումներով:

Անկախ դրանից, ստացված ցուցանիշներում ծրագրվածի համեմատ նախատեսվել էր նաև տնային տնտեսությունների լրացուցիչ ցուցակ՝ հետազոտության մասնակցելուց հրաժարվելու կամ հասցեների անհամապատասխանության դեպքերում հնարավոր ռոտացիայի նպատակով:

Հարցման «դաշտային» աշխատանքների ավարտից հետո, հարցազրույցավարների կողմից լրացված հարցաթերթերը ներկայացվել են վերահսկիչ-հրահանգիչներին, որոնց կողմից իրականացվել է հարցաթերթերի թվաքանակական և տրամաբանական ստուգում:

Ստուգման ենթարկելուց հետո, իրականացվել է լրացված հարցաթերթերի մուտքագրում՝ համապատասխան ծրագրի միջոցով: Ընդ որում, մուտքագրման ժամանակ առաջացող հնարավոր սխալների չեզոքացման նկատառումով, միևնույն հարցաթերթը մուտքագրվել է կրկնակի՝ երկու տարբեր մուտքագրողների կողմից, իսկ մուտքագրման արդյունքները համեմատվել են համակարգչային ծրագրի միջոցով:

Հավելված 5. Հետազոտության հիմնական արդյունքները հանրապետությունում

Բովանդակությունը

- Աղյուսակ 1. Ձեռուցումն ըստ Էներգիայի տեսակի 2004-05 ձմռան ընթացքում
- Աղյուսակ 2. Ձեռուցումն ըստ Էներգիայի տեսակի 2003-04 ձմռան ընթացքում
- Աղյուսակ 3. Ձեռուցման նպատակով օգտագործվող հիմնական սարքավորումները
- Աղյուսակ 4. Ձեռուցումն ըստ բնակարանների սենյակների քանակի
- Աղյուսակ 5. Խոհանոցի և սանհանգույցի ջեռուցումը
- Աղյուսակ 6. Կենցաղային նպատակով օգտագործվող տաք ջրի տաքացումն ըստ սարքավորումների
- Աղյուսակ 7. Ձեռուցվող օրվա միջին երկարությունը
- Աղյուսակ 8. Ձեռուցվող սեզոնի միջին երկարությունը
- Աղյուսակ 9. Միջին ջերմաստիճանն ըստ ջեռուցման Էներգիայի տեսակի
- Աղյուսակ 10. Անբավարար ջեռուցման պատճառով գրանցված հիվանդությունները
- Աղյուսակ 11. Էլեկտրաէներգիայի փաստացի օգտագործումն ըստ բնակարանների մեծության
- Աղյուսակ 12. Բնական գազի փաստացի օգտագործումն ըստ բնակարանների մեծության
- Աղյուսակ 13. Վառելափայտի փաստացի օգտագործումն ըստ բնակարանների մեծության
- Աղյուսակ 14. Հեղուկ գազի փաստացի օգտագործումն ըստ բնակարանների մեծության
- Աղյուսակ 15. Ձեռուցման վրա կատարված ծախսերի բաշխումն ըստ ջեռուցման տարբեր տեսակներ կիրառողների
- Աղյուսակ 16. Ձեռուցման ծախսերի մեծությունը սննդի վրա կատարվող ծախսերի համեմատ՝ ըստ ջեռուցման տարբեր տեսակներ կիրառողների
- Աղյուսակ 17. Ձեռուցման և սննդի վրա կատարված ծախսերի համադրությունը (սննդի նկատմամբ ծախսերը՝ 100 տոկոս)
- Աղյուսակ 18. Ձեռուցման և սննդի վրա կատարված ծախսերի համադրությունը (ջեռուցման ծախսերը՝ 100 տոկոս)
- Աղյուսակ 19. Ձեռուցումից գոհունակությունն ըստ օգտագործված Էներգիայի տեսակի
- Աղյուսակ 20. Ձեռուցման տվյալ տեսակի օգտագործման թերությունները
- Աղյուսակ 21. Ձեռուցման թերությունների բաշխումն ըստ ջեռուցման տեսակի
- Աղյուսակ 22. Տնային տնտեսությունների կողմից ջեռուցման այլ տարբերակների նկատմամբ նախապատվությունը
- Աղյուսակ 23. Ձեռուցման այլ տարբերակի անցման նախապատվության պատճառներն ըստ գերակայության
- Աղյուսակ 24. Ձեռուցման նախընտրելի տարբերակը չկիրառելու պատճառները
- Աղյուսակ 25. Տնային տնտեսությունների եկամուտների հիմնական և լրացուցիչ աղբյուրները
- Աղյուսակ 26. Ձեռուցման վրա կատարվող ծախսերի մեծությունը և դրա բաշխումն ըստ եկամտի հիմնական աղբյուրի
- Աղյուսակ 27. Տնային տնտեսությունների ամսեկան եկամուտի մակարդակը և դրա համադրումը ջեռուցման վրա ծախսերի մեծության հետ
- Աղյուսակ 28. Տնային տնտեսությունների ամսեկան եկամուտի մակարդակի համադրումը պատուհանների վիճակի հետ
- Աղյուսակ 29. Տնային տնտեսությունների կենսամակարդակի սուբյեկտիվ գնահատականի համադրումը պատուհանների վիճակի հետ
- Աղյուսակ 30. Հարցազրույցավարի կողմից տրված կենսամակարդակի գնահատականի համադրումը պատուհանների վիճակի հետ
- Աղյուսակ 31. Ձեռուցման նախընտրելի տեսակի ապահովման համար վարկ ստանալու պատրաստակամությունը և դրա հիմնավորումը

Հայաստան

Աղյուսակ 1. Ջեռուցումն ըստ էներգիայի տեսակի 2004-05 ձմռան ընթացքում

	Հիմնական	Լրացուցիչ
	տոկոս	տոկոս
Ոչ մի	2.8	26.6
Կենտրոնական ջեռուցում	1.9	0.4
Էլեկտրաէներգիա	33.3	13.5
Բնական գազ	30.0	2.4
Հեղուկ գազ	0.2	1.0
Նավթ և դիզելային վառելիք	0.2	0.4
Փայտ	30.5	2.6
Այլ	1.1	0.7
Պատասխան չկա	0.0	52.4
Ընդամենը	100.0	100.0

Աղյուսակ 2. Ջեռուցումն ըստ էներգիայի տեսակի 2003-04 ձմռան ընթացքում

	Հիմնական	Լրացուցիչ
	տոկոս	տոկոս
Ոչ մի	2.0	25.6
Կենտրոնական ջեռուցում	3.7	0.9
Էլեկտրաէներգիա	36.6	12.8
Բնական գազ	13.1	1.2
Հեղուկ գազ	0.2	1.0
Նավթ և դիզելային վառելիք	0.4	0.2
Փայտ	42.5	3.4
Այլ	1.7	0.8
Պատասխան չկա	0.0	54.1
Ընդամենը	100.0	100.0

Աղյուսակ 3. Ջեռուցման նպատակով օգտագործվող հիմնական սարքավորումները

	Ձմեռ 2004-05	Ձմեռ 2003-04
	տոկոս	տոկոս
Էլեկտրական սալիկ	21.7	24.4
Էլեկտրական ջեռուցիչ (տեռն, յուղային մարտկոց)	12.8	11.7
Գազօջախ	4.3	1.3
Ինքնաշեն վառարան	36.0	45.1
Գործարանային վառարան (պարսկական արտադր.)	21.9	7.6
Գործարանային վառարան (եվրոպական արտադր.)	0.6	0.2
Գործարանային արտադրության այլ վառարան	0.5	0.4
Լոկալ-անհատական կաթսա	0.9	0.3
Լոկալ-կոլեկտիվ կաթսա, ամբողջ շենքի համար	0.0	0.1
Կենտրոնական ջեռուցում	0.9	3.3
Այլ	0.3	0.4
Պատասխան չկա	0.0	5.1
Ընդամենը	100.0	100.0

Աղյուսակ 4. Ջեռուցումն ըստ բնակարանների սենյակների քանակի

	1 սենյակ	2 սենյակ	3 սենյակ	4 և ավելի	չի ջեռուցվել	Ընդամենը
	ջեռուցված սենյակների քանակը տոկոսներով					
1 սենյականոց	97.3	0.0	0.0	0.0	2.7	100.0
2 սենյականոց	49.7	46.6	0.0	0.0	3.7	100.0
3 սենյականոց	40.6	20.1	36.2	0.0	3.1	100.0
4 և ավելի սենյականոց	34.5	22.3	10.7	30.6	1.9	100.0
Բոլոր բնակարաններ	51.7	27.0	15.0	3.2	3.2	100.0

Աղյուսակ 5. Խոհանոցի և սանհանգույցի ջեռուցումը (տոկոս)

	Այո	Ոչ	Պատասխան չկա	Ընդամենը
Ջեռուցվել է արդյոք խոհանոցը	36.8	63.2	0.0	100.0
Ջեռուցվել է արդյոք բաղնիքը	6.8	93.2	0.0	100.0

Աղյուսակ 6. Կենցաղային նպատակով օգտագործվող տաք ջրի տաքացումն ըստ սարքավորումների

	Տոկոս
Ոչ մի	1.5
Էլեկտրական սալիկ և բաց ջեռուցիչ	36.7
Էլեկտրական ջրատաքացուցիչ (գեյզեր)	7.6
Էլեկտրական բաք կամ կաթսա	5.3
Գազի ջրատաքացուցիչ	12.1
Գազօջախ	12.0
Վառարան	22.2
Լոկալ անհատական կաթսա	0.8
Այլ	1.7
Ընդամենը	100.0

Աղյուսակ 7. Ջեռուցվող օրվա միջին երկարությունը

	Տոկոս	Կուտակային տոկոս
1 ժամ	0.7	0.7
2 ժամ	3.0	3.7
3 ժամ	4.8	8.5
4 ժամ	9.8	18.3
5 ժամ	11.1	29.4
6 ժամ	14.5	43.9
7-ից 11 ժամ	32.9	76.8
12-ից 16 ժամ	17.3	94.2
17-ից 21 ժամ	2.2	96.4
22-ից 24 ժամ	3.6	100.0
Ընդամենը	100.0	-

Աղյուսակ 8. Ջեռուցվող սեզոնի միջին երկարությունը

	Տոկոս	Կուտակային տոկոս
